Ձեռագիր
Առաքաբեր
1913-14
49

ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆԾԻ ԴԱՆ» (Դտկ. ԺԸ. 16)

ՀԱՅՈՒՄԻՒԹԻՒՆ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1913 ԹԻՒ 1

եր, Նոր
օր ձեվի
ար և ձեր
ն տեսնէք
ըրած են
Շատ մը
ն, նաև
ւ տեսակ
կը զար-
աղտար
ղքներէն,
ականնե-
է այսօր
այ և սի-
ականներու
աք ու կը
ամենը.—
որ

ր կրա-
անդ ըլ-
մչտու-

պատրաստ: Դուք կրնաք ձեր անուշ եղ-

դերով չենցնել ձեր ընտանեկան յար-
կերը: Դուք տունին երջանկութիւնն էք.
բայց մի մոռնաք թէ ինչպէս կ'ուզէք
որ ձեր ծնողքները ձեր փափաքները
կատարեն՝ նոյնպէս և դուք պէտք
էք անոնց փափաքները կատարելու հա-
մար: Այդ կերպով դուք աւելի երջա-
նիկ պիտի ըլլաք և չմոռնաք՝ ա'լ աւելի
երջանիկ պիտի ընէք:

Գիտեմ թէ, դեռատի սիրելիները,
դուք արդէն նոր բաները մէյա կը սի-
րէք. նորաձեւութիւնը մէյա կը հրապուրէ
ձեզ: Երջանիկ էք երբ նոր բան մը ու-
նենաք: Նոր զգեստ մը, նոր կօշիկ մը,
նոր խաղալիկները մեծ ուրախութիւն կը
պատճառեն ձեզի: Չեմ մոռնար չէ՞ր
յիշեր որ երբ աւելի փոքր էիք դեռ՝
Նոր Տարիի կամ Մեռելոց նախընթաց
գիշերը քուներնիդ լաւ չէր տաներ, ա-
րամ հետեւ մեծ օրը առաւօտն պիտի ար-
թընայիք և նոր զգեստներ եւայլն պիտի
հագնէիք: Ուրեմն, դժուար չէ երեւա-
կայել որ Նոր Տարին ալ իր բոլոր նուէր-
ներով ու ժպիտներով նորաթեան մը

ԱՆԿԱՆՁ

ՏՂՈՅՔ ՈՐ ԻՆԾԻ ԴԱՆ» (Դտկ. ԺԸ. 16)

ՀԱՏՈՐ ԽԲ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1913 ԹԻՒ 1

ՆՈՐ ՏԱՐԻ

Սիրելի տղաքներ և աղջիկներ, Նոր Տարի է այսօր, ի՞նչ ուրախ օր ձեզի համար։ Երբ անգամ մը գառնաք և ձեր շուրջը նայիք վայրկեան մը՝ կը տեսնէք թէ ձեր ծնողքը ամէն բան ըրած են ձեզ երջանիկ ընելու համար։ Շատ մը անուշեղէններ պատրաստած են, նաև առատ պատուղ, չաքարեղէն և տեսակ տեսակ համեղ կերակուրներ կը պատրաստեն ձեր սեղանները։ Այսօր աղուոր նուէրներ կը տանաք ձեր ծնողքներէն, եղբայրներէն, քոյրերէն, աղգականներէն և բարեկամներէն։ Մեծ է այսօր ձեր ուրախութիւնը. ձեր ծնողաց և սիրելիներուն հետ տաքուկ սենեակներու մէջ պատապարուած կ'ուրախանաք ու կը խայտաք։ Ինչո՞ւ համար։ Այս ամէնը.— որովհետեւ Նոր Տարի է այսօր։

Այո, տղաք այս ամէնը ձեր իրաւունքն է երբոր բարի և հնազանդ ըլլաք՝ ձեր ծնողքներուն օգնելու սկսած պատրաստ։ Բուռ կրնաք ձեր անուշ երկերով չենչմարել ձեր ընտանեկան յարկերը։ Բուռ տունին երջանկութիւնն է. բայց մի մոռնաք թէ ինչպէս կ'ուզէք որ ձեր ծնողքները ձեր փափաքները կատարեն՝ նոյնպէս և դուք սկսած էք անոնց փափաքները կատարելու համար։ Այդ կերպով դուք աւելի երջանիկ պիտի ըլլաք և ձանձրոյթ՝ ա՛լ աւելի երջանիկ պիտի ընէք։

Գիտեմ թէ, դեռատի սիրելիները, դուք արդէն նոր բաները սկսա սիրեք. նորութիւնը սկսա հրապուրէ ձեզ։ Երջանիկ էք երբ նոր բան մը տեսնեցաք։ Նոր զգեստ մը, նոր կօշիկ մը, նոր խաղալիկները մեծ ուրախութիւն կը պատճառեն ձեզի։ Ձեզմէ ոմանք չէ՞ր լիշեր որ երբ աւելի փոքր էիք դեռ՝ Նոր Տարին կամ Մեռելոց նախընթացի դիշերը քուներնիդ լաւ չէր տանէր, առաւօտեան վեռս օրը առատան պիտի արթննայիք և նոր զգեստներ եւայլն պիտի հագնէիք։ Ուրեմն, դժուար չէ երեւակայել որ Նոր Տարին ալ իր բոլոր նուէրներով ու ատիճներով նորութեան մը

հրապոյրը ունի. Հեզի համար և իրա-ւամբ երջանիկ և ուրախ էր այսօր։ Ոչ միայն այսօր՝ այլ պէտք է որ միշտ ու-րախ ըլլար. Հեր կեանքերը գեռ ապա-հեն հոգերէ և մոռատնջութիւններէ։ Գեռ պարտականութեան ծանր բեռնե-րու տակ մնած չէր։ Շատ յարմար է որ միշտ ուրախ ըլլալու բնաւորութիւն մը ունենայ, ունակութիւն մը որ յեռայ կեանքի մէջ շատ օգտակար պիտի ըլլայ Հեզի համար, երբ արդէն երեսի մը պես անցած են մանկութեան օրերը։

Բայց այս առիթով պիտի ուզէի նաև պզտիկ խնդրատրութիւն մը ընել Հեզի և դիտեմ թէ այս խնդրատրութիւնս ար-դէն Հեր փափուկ սիրտերուն կը խօսի։ Յարմար է որ դուք այսօր չմոռնաք Հեր որբ ու խիղճաւոր եղբայրները, որոնք Հեր վայելած բաներուն և ոչ մէկը ունին։ Ջանացէք զանոնք յիշել Հեր պզտիկ նուէրներով, որովհետև անոնք ալ մա-նուկներ և տղաքներ են և Հեզի նման զգայուն ունին։ Եթէ Հեզի իւրա-քանչիւրը մէկ տղան կամ որբ տղայ ուրախացնելու փոքր մը ընէ, գիտցէք թէ այս երջանիկ օրուան ուրախութե-նէն զրկուած տղայ մը գրեթէ չպիտի մնար։ Նաև յիշեցէք Հեզին հետու գըտ-նուելով Հեր սիրելիները, անոնց ալ նուէր-ներ և նամականիներ գրկելով։ Ա.յսպիսի ոճով օրերուն յաճախ ինքզինքնիս միայն կը խորհինք. բայց պէտք է ոչ այսպիսի օրեր առիթ շատ խորհինք ուրիշները, զանոնք ալ մեզի հետ երջանիկ ընելու համար։

Ա.յս պատեհ առիթով կը մաղթեմ որ այս Նոր Տարին ամէնուն համար ըլ-լայ բարիքներու տարի մը, և վայելեք դէ։ շատ մը երջանիկ ու երկար տա-րիներ՝ Հեր ծնողքը երջանկացնելու և աշխարհի օգտակար ծառայութիւններ մատուցանելու համար։

(Տիկին) Լ. Գ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԾՆՈՒՆԴ

(ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳ)

1. Փորիկ խաղաք դու Բեթղեհեմ,
Ի'նչ խաղաղ ես, անդորր.
Երկինքիդ վրայ երեւաւեր
Աստղեր փայլին ադուոր.
Քողոցներուդ մէջ մութ, նըման՝
Լոյսը Յաւիտեանին
Ցոլաց. յոյսեր, վախեր դժխեմ
Այսօր կը զրկըվին։

2. Այսօր Բրիստոս Մարիամեն
Հըրաշապէս ծընաւ,
Հրեշտակներու խումբեր կ'երգեն
Անոր փառքը անթառ։
Առաւօտեան աստղեր հառնայն,
Ծընունդը երգեցիք,
Դուք եղիք մեր Աստուած-Արքան.
Հանուրի'ն մարդոց հիմ։

3. Ո'րջան խաղաղ, ո'րջան անձայն
Ընդունրիը տըրուեցաւ,
Այսպէս Աստուած մարդոց հառնայն
Բարիք կուտայ անթառ։
Կրնայ ըլլալ ոչ ոք լըսէ
Աշխարհ գաղտնի Անոր,
Խոնարհ սիրտը Բրիստոսի
Պիտի առնէ շընորհ։

4. Ով սուրբ Մանուկ Բեթղեհեմի,
Այցելէ մեզ այսօր,
Ցրտէ մեղքի մութն վաղեմի,
Մեր մէջ ծընիր դու նոր։
Թող Ծընունդի հրեշտակներ
Փութան մեզ առնել.
Դուն այցելէ սիրտերը մեր,
Ով Տէր Էմմանուէլ։

Անգղ.է Դ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



ՄՆՆԴԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ԱՆԱԿՆԿԱԼ ԵՐԳԻՉԸ

Մնուշդի Թիմոսին իրիկունն էր Անդ-
ղիայ մէջ և ձիւնը ծիւ, ծիւ կ'իյնար։
Երկաթիկ տուներու մէջ հազ չէին ըներ
ձիւնն ու ցուրտը. հոն լամբարներ ու
վառարաններ կը վառէին ուրախ ու
հանգստաւէտ և թէյի սեղաններդ յար-
դարուած էին։ Բայց փոքրիկ կարմրա-
լանջ մը (իսկերէ գուշտ), ահօթի ու ցըր-
տահար, հոս հոն կը ցատկռտէր պար-
տուտն, և ապաստան մը ու կեր կը
փնտռէր։

Փոքրիկ Թռչունը պատուհաններու
մէջ կը թռաւէր և գութեն իր փոքրիկ
կտուցով կը կոտրէր ապակիներդ, բայց
անոր այս ձեւով օգնութեան կոչին ոչ
ոք ուշադրութիւն կու տար։ Անգամ մը
միայն երկու փոքր աղջիկներ պատու-
հանէն դուրս նայեցան և զայն տեսան,
բայց օդը այնչափ ցուրտ էր որ անոնք
ալ չուզեցին ետ դիպի ներս, տաքուկ
վառարանին քով, քաշուելյան և խեղճ
Թռչնակը թողուն յատահատաբար։

Ինչ մը ետքը ծերունի մը կ'անցնէր
այն ճամբէն, որ դիւղին եկեղեցին կը
տանի։ Կարմրալանջը անոր ետեւէն ցատ-
կռտուելով թռչիլ սկսաւ և երբ մարդը
եկեղեցիին դուռը բացաւ՝ խեղճ թըռչ-
նակը աւանդ նշմարտուելու անոր հետ
ներս մտաւ։ Օ՜հ, ս'րբոյն տաք ու հան-
գըստաւէտ էր եկեղեցին։ Կիրակնօրեայ
Դպրոցի ուսանողները հոն հաւաքուած
էին լրնդ ուսուցիչներով և եկեղեցին
գամիներով ու մշտնբճով զեղեց-
կապէս զարդարուած էր, և Մնուշդի
երգը կ'երգուէին։ Ս.յդ դիշեր եկեղե-
ցիին չերմոցը վինչեւ առաւ պիտի
վառուէր որ յաջորդ առաւտան Մնուշդի
պաշտամունքին համար եկեղեցին տա-
քուկ մնար։ Ծերունին չերմոցին մէջ
նոր հանքածուխ դրաւ և տուն դնաց։
Թռչնակը չերմոցին քովը թռչիլ և
գեռանին վրայ թափուած քանի մը փշրանք-
ները կոտրել սկսաւ։ Հոն մանուկներուն
ձեռքեր բաշխուած էին։ Կրնար երեւակայել
թէ ս'րբոյն հաճելի էր այս ընծաները այդ
ահօթի, խեղճ կարմրալանջին։ Յետոյ
ան անդամներուն բազրիքներուն վրայ
թռաւեցաւ, և գլուխը թեւիններուն տա-
կը խօթեց և քնացաւ երկանիկ ու հան-
դիստ։ Առաւտն երբ թռչնակը բացաւ
իր փայլուն աչքերը՝ հաճոյքով դիտեց
եկեղեցիին մէջ պարզուած տեսարանը,
մանաւանդ բերուած գաւնիի և մշա-
մուրճի ծառերուն վրայ հաւնաերը, ո-
րոնք բաւական առենուան համար կերի
մթերք մըն էին երեն համար, ձմրան
այդ խիստ եղանակին։

Քանի մը ժամեր անցան և ուրախ
զուարթ մանուկներ եկան եկեղեցի և
երգեցին երեկոյ Մնուշդի երգերը։

Ինչդ այն տանն երբ երգին առա-
ջին տունը վերջացած էր՝ յոտակ, զօ-
րաւոր և ուրախ երգ մըն ալ դուրս
թռաւ թռչնակին փոքրիկ կոկորդէն.
երգը այնչափ բարձր էր որ անոր ներս
կայութիւնը կը մտաներ ծառերուն մէջ-
ջինե։ Նախապէս ոչ ոք իմացած էր անոր
հոն ըլլալը, և ի՜նչ հաճելի անակնկալ...։
Երեկոյ ձեռքը վերցուց որ մանուկներու
երգը լսէ՝ մինչ թռչնակը կ'երգէր, և
յետոյ Սբ. Գիրքը բանալով հետեւեալ
խօսքերը կարդաց յարդալիր ձայնով մը.

"Ձնճղուկն ալ տուն գտաւ, ու ծի-
ծեռնիկը երեն բոյն՝ ուր ձագերը դնե-
լու համար, քու սեղաններուդ քով, ով
զօրաց Տէր, իմ Թագաւորս և Աստուածս"
Սաղմ. ՁԴ 3։

"Ա՜յս անգամ," ըսաւ երէցը, "մեր
սիրական Թռչնակը, մեր փոքրիկ կար-
մրլանջալանջը, գտած է տուն ու ապաստան
և կեր այս եկեղեցիին մէջ ուր կը հա-
ւաքուինք աղօթելու մեր ամենօրեան
հացին համար։ Դուրսը ամէն կողմ ձիւն
պատած է, և ծածկած է գետինն ու մա-
գաստանները. ան կը մեռը ու անօթի էր, և
կրնար մեռնիլ փոթորիկին մէջ, բայց
մեր ամենուս բարի Հայրը իր առատ
դթութեամբը անոր փափուկ թեւիկ-

նեերը հոս առաքեցրած է։

"Այս փոքր խռնակը զԱյն կ'օրհնաբանէ իր խեղճ ալիք երգով։ Մենք ալ, որ շատ աւելի մեծ պատճառներ ունինք նայելը ընելու, ալիսի չուզենք դառ վաբանել զԱյն ուրախութեամբ։"

ԵՐԳԷ, ՔՆԱՐ

Երգէ, իլնար,
Դու խաղցրպար,
Երգերդ նորեն
Ձիս կը դիպչեն։

Երգէ, իլնար,
Երգէ դուն յար.
Հոգիիս դա՛ւն
Երջանկութիւն։

Երգէ, իլնար,
Քախտաւոր,
Վիշտ չունիմ ես
Երբ դուն կ'երգես։

Երգէ, իլնար,
Շեշտերդ անճառ
Ներշնչումներ
Են իղձերուս։

Երգէ, իլնար,
Ձի չէ հլնար
Որ առանց քեզ
Կեանքն ապրիմ ես։

Երգէ, իլնար
Իմ փափկապար,
Քեզ կը փարիմ,
Դուն սիրտն ես իմ։

ԿԻԼԻԿԵԱՆ

ԲԱՐԻՔ ԸՆԵԼ

Մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի համար ըսուած է թէ երկրի վրայ ա՛ւելի որ գնայ՝ բարին ըլլաւ։ Այսպէս ալ Անոր խօսքերը հետեւողները, իսկապէս քրիստոնեաները, Անոր նման բարիք ընելու են ա՛ւելի որ երթան։ Ահաւասիկ ալեկ նշանաբան մը, զոր կ'արժէ որ բոլորս ալ սորվինք և գործադրենք։

Ըրէ որչափ բարիք որ կրնաս,
Այժմէն կեդրոնով որ կրնաս,
Այժմէն առեն որ կրնաս,
Այժմէն մարդուս որ կրնաս,
Այժմէն տեղերը որ կրնաս,
Եւ յաւէտ որչափ որ կրնաս։

ՅՈՐԴՈՐԱԿ ԿԱՂԱՆԴԻ

ՊԶՏԻԿ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՄ

Հայրենի տան կըտուրին տակ,
Վառարանին խովը տաքուկ,
Անհոգ, անվիշտ սիրուն կը խընդամ՝
Հազուստ բրդեայ հանդերձներ դուք,
Ձիշդ ձեզ նըման՝ ինքուշ, փափուկ,
Մերկ, ցրտահար որբերը հի՛ք,
Ո՛հ, մի մոռնաք, յիշեցի՛ք...:

Սեղանին շուրջը քոյրուած
Ճոխ կաղանդի առատագեղ,
Մինչ ձաշակիք դուք կըյոր հաց,
Թուղն եւ արուա, մերձ հանգեղ,
Ձիշդ ձեզ նըման՝ մատղաշ, անմեղ
Որբուհիները մխայնա՛կ...
Ո՛հ, յիշեցիք, մի մոռնա՛ք...:

Ու սիրէ կ'երգէք անհուն խանդիւ
Շուրջ Ծընընդեան շքեղ ծառին՝
Որուն վրայ մոմեր անթիւ՝
Պարիկներու մէջ՝ կը վառին
Շնորհաւորել ձեզ Նոր Տարին,
Ձիշդ ձեզ նըման՝ այդ վշտաբեկ
Որբին արցունքն յիշեցի՛ք...:

Մուշտակներու մէջ փաթըթուած,
Գուլպաներով քանձր ու կախուղ,
Փառաբանել ձեր Հայրն Աստուած
Եկեղեցի դիմէք կանուխ,
Ձեր աղօթքին մէջ արտաբուխ՝
Նօթի՛, բոկո՛տն, անխտրուելո՛ւկ
Որբուհիներն, ո՛հ, մի մոռնաք...:

Մի, մի մոռնաք, յիշեցէք միշտ՝
Թէ որքին կեանք ո՛րքան է՞ դառն,
Ա՛խ... ո՛րքան խոր է անոր վիշտ,
Մէ՛կ սպասող հացն արցունքով խառն,
Ո՞չ ապահին Աստուծոյ Գառն
Մեռա՛ւ փրկել մեղաւորն հէք,
Օ՛հ, խեղճերուն օգնեցէք...:

Ա. Կ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

ՏՂՑՈՑ ԲԵՄԸ

ՆԿԱՐԱԳԻՐԻ ԵՐԵՍԱԿՆԵՐ

ԻԵ.

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ

Դեռատի ընթերցողներս, դիտէք թէ մեր այս խրատական բաժինին մէջ երբեմն տարիէ ի վեր կը խօսիմ ձեզի մեր նկարագիրին վայլուն երեսակները կազմող յատկութիւններուն վրայ: Դիտէք նաեւ թէ անոնք թիւով քիչ չեն. սոյն համար կը խորհիմ այս տարի ալ շարունակել շարքը այս խրատականներուս, որոնք կը յուսամ թէ օգտակար պիտի ըլլան ձեզի, եթէ պէտք եղած ուշադրութեամբ կարդաք զանոնք, եւ մանաւանդ աշխատիք բարի եւ օգտակար ընդունակութիւնները զարծնեցնել ձեր կեանքերուն մէջ: Որովհետեւ չատ անգամ մեր տկարութիւնը մեր տգիտութեան մէջ չէ, այլ մեր գիտցածները գործադրելու մէջ: Քաղցր է լինիլ յուսալ թէ դուք, երբեմն բարի տղաքներ, ձեր բոլոր հոգիով պիտի ջանաք յղկել ու փայլեցնել ձեր նկարագիրին երեսակները եւ այդ կերպով ըլլալ բարի, օգտակար եւ կրօնասէր քաղաքացիներ:

Այս անգամ քանի մը թելադրութիւններ պիտի ընեմ ժուժկալութեան վրայ: Եթէ բանաք ձեր բառարանը տեսնելու համար թէ ժուժկալութիւն բառը ի՛նչ կը նշանակէ, պիտի գտնէք թէ սա տեսակ բացատրութիւններ գրուած են. — առաքինութիւն՝ մարդուս իր հաճոյքը չափաւորելու, կամաւոր զրկում կերակուրներէ, պահեցողութիւն, ճղնութիւն, համբերութիւն, չափաւորութիւն, բարեխառնութիւն, դիմանալ, կարճութիւն եւայլն: Կը տեսնէք թէ ի՛նչ է բառին իմաստը: Բայց դիտէք նաեւ թէ ի՛նչ է այս յատկութեան նշանակութիւնն ու-

արժէքը կեանքի մէջ։ Ժուժկալութիւնը մեր փափաքներուն և բաղձանքներուն ուղղիչն ու կանոնաւորիչն է։ Ահա ատոր համար շատ կարեւոր յատկութիւն մըն է, որ ոչնախիւնը կը կազմէ մեր նկարագիրն չէնքին։ Ցաճախ մեր փափաքները հզօրապէս կը տիրեն մեր վրայ. անոնք կ'առաջնորդեն մեզ, և մենք մեր փափաքներուն չինած մարդը կ'ըլլանք. ահա այն ատեն պէտք է որ ժուժկալութիւնը իբր ուղղիչ ուժ մը կառավարէ մեզ։ Ան պէտք է զգուշացնէ մեզ ծայրայեղութիւններէ, որոնք միշտ վտանգաւոր են մեզի համար։ Թէեւ դուք՝ իբրեւ դեռատիներ՝ գործունէութեան աշխարհին մէջ շատ գործօն դեր մը չունիք առ այժմ, բայց յայտնի է թէ կեանքի այս շրջանին, երբ ձեր փափաքներն ու բաղձանքները թեւ կ'առնեն ձեր պատանեկի սիրտերուն մէջ, երբ ձեր նախախնամութիւնները որոշ դոյն կ'առնեն, պէտք էք նաեւ մշակել ժուժկալութիւնը որ բանաւոր ու չիտակ ուղղութեան մը առաջնորդէ ձեզ։ Մնունդը մեզի համար կենսական կարեւորութիւն ունի. առանց անոր կը մեռնինք։ Բայց չափազանց ուտելն ալ վտանգաւոր հետեւանքներ կ'ունենայ։ Մենք բնազդաբար հաճոյքներ վայելել կ'ուզենք, բայց հաճոյամոլ ըլլալ միտակար կ'ըլլայ մեզի համար։ Չափաւորութիւն և բարեխառնութիւն բարերար ազդեցութիւն ունին մեր վրայ՝ մեր ամէն գործին և ամէն խօսքին մէջ։ Ոմանք կը կարծեն թէ ժուժկալութիւնը թուլութիւն, դանդաղութիւն, եռանդի պակաս կը նշանակէ։ Բայց այդ սխալ հասկացողութիւն մըն է. մարդ կրնայ ամէնէն եռանդուռ, գործունեայ ու միեւնոյն ատեն ժուժկալ մէկը ըլլալ։ Երբ ամէնէն եռանդուռ գործունէութեան մէջ իսկ միտքի ու առաջաքանութեան դէմ չենք գործեր՝ ժուժկալութեան սահմանին դուրս եւած չենք ըլլար։

Ուրեմն, սիրելի տղաքներ ու աղջիկներ, կը տեսնէք թէ ժուժկալութիւնը ձեզի համար հիմնական իսկ կարեւոր յատկութիւն մըն է, զոր պէտք էք մշակել, եթէ կ'ուզէք յաջողութեամբ պատկել ձեր կեանքերը։ Ամէն բանի մէջ չափաւորութեան սահմանին դուրս մի ելլէք։ Մանաւանդ երբ աւելի մեծնաք և ձեր փափաքները աւելի զօրանան ձեր մէջ, այն ատեն շատ պէտք պիտի ղգաք ժուժկալութեան ամէն բանի մէջ։ Ժուժկալ մարդիկ ինչպէս չար փափաքներէ և սոսրին հաճոյքներէ՝ նոյնպէս ալ դէշ սովորութիւններէ հեռու մնալ պէտք են։ Դիւրամոլութիւն, ծխամոլութիւն, չար յանկութիւններ դէմ են ժուժկալութեան։ Թէեւ սխալ՝ բայց նոյն ատեն իրողութիւն է՝ որ աշխարհ մեծապէս կը տառապի անժուժկալութեան պատճառով։ Շատ կեանքեր կը կործանին անժուժկալութեան ազդեցութիւնով։ Բայց՝ իբրեւ բանական էակներ՝ ձեզմէ կը սպասուի տիրել ձեր անձերուն, յաղթել ձեր կիրքերուն և չար փափաքներուն, որ այն ատեն պիտի տիրէք նաեւ աշխարհի իբրեւ ճշմարիտ ուժ։ Նոր Տարին այս երջանիկ առիթով իբրեւ ձեր ամէնուն բարեկամը — որովհետեւ բոլոր միայն կը բաղձամ ամէնուդ համար — կը մաղթեմ որ ըլլաք ժուժկալ, տոկուն և ճշմարտապէս Աստուածապաշտ Հայ պատանիներ, իբրեւ օրհնութիւն ձեր ընտանեկան յարկերուն և պատիւ՝ ձեր ազգին, հայրենիքին և հասյն մարդկութեան։

Դր. Հ. Դ.

ԵՐԵՔ ՊԻՏԻ ԶԳՈՒՇԱՑ

Երբ զոգես լեզուդ խօսելէ խօսք մը զոր պէտք չես խօսիլ։

Երբ լաւագոյնդ ընես ուրիշներու բարիք ընելու համար։

Երբ ներես անանց որ քեզի չարիք հասցուցին։

Երբ դրամ տաս աւետարանչական նպատակներու համար։

Երբ ճշդապահ ըլլաս խոստումներդ յարգելու մասին։

Երբ համբերութեամբ վարուիս յաճառ խաղընկերներու հետ։

Երբ բարութեան և գթութեան խօսք մը խօսիս աղքատ ու տխուր տղու մը։

Երբ վշտակից տառապեալին։

Երբ բարի ազդեցութիւն մը թողուս ուրիշներու վրայ։

Երբ ըրած սխալիդ համար ներողութիւն խնդրես։

Երբ մերժես լսել դէշ ու պոռնիկ պատմութիւններ։

Երբ ուղղամիտ ըլլաս ամէն բանի մէջ։

Երբ մաքուր մտածումներ ունենաս։

Երբ խօսելէ առաջ մտածես։

Երբ ծնողքդ յարգես ու պատուես։

Երբ զուարթ ոգի մը ունենաս։

Երբ քաղաքավար ըլլաս։

ՊԵԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ա. Ղ. - Մ Ո Ւ Խ

Լուծեցին, Պօլսեցիկ (Վոսփոր). — ՍԻՐՈՒՀԻ Գ. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ : Թագիդ. — ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՐԱԳԱՃԵԱՆ : Կ. Պոլիս. — ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ : Մարիզիդ. — ՆՈՒՒԱՐԴ Յ. ԽԱՉԱԴԱԼԵԱՆ : Պարտիզակ. — ՋԱՊՂ. եւ ԴՐԻԳՈՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ : Պուրսուր. — ՈՍԿԱՆ Գ. ՈՍԿԱՆԵԱՆ : Կ. Պոլիս. — ՍԻՐՎԱՐԴ ՀԱՅԿԱԶՆ : Իզմիր.— ԱԲԱՄ ԴԱՎԱԼԵԱՆ, ՀԱՅԿ Գ. ՂԱՉԱՆԵԱՆ, ՀՐԱՆՏ ՄԱՂԱԲԵԱՆ, ԱԲՐԱՀԱՄ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ԱԲԱՄ ԱՊԱՃԵԱՆ, ԼԵՒՈՆ ԱՊԱՃԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԼՇԿԵԱՆ : Մէհրվիճռև.—ՀՐԱԶԵԱՅ Յ. ՏԻԼՏԻԼԵԱՆ :

ՀԱՆԵԼՈՒԿ

Պաղատահ մօսիկ գիւղերէն Արաբ մը երբ հասկցաւ թէ մահամերձ է՝ իր ունեցած ուղտերուն ընդամէնը, 17 ուղտեր, հեռեւեալ հարիւրամասնութեամբ կտակեց իր վիրջ և զաւակներուն։ Ունեցած ուղտերուն, այսինքն այս 17 ուղտերուն՝ կէսը տղուն, 1/3ը աղջկան և 1/9 ալ կնոջը պիտի ըլլար։ Արաբին մեռնելէն ետքը ժառանգորդներուն մէջ անհամաձայնութիւն մը և գժտութիւն մըն է սկսաւ։ Որովհետև անկարելի կ'ըլլար կտակը տրուած հարիւրամասնութեամբ բաժնել և իրենցմէ ոչ մէկը կ'ուզեր իր բաժինէն պակաս առնել։

Բարեբախտաբար այդ օրեր մարգարէին յաջորդներէն Հազրեթ ի Ալի պատահի եկած էր դէպ ի Պաղատահ։ Օրէն մէկը երբ իր ուղտին վրայ հեծած այդ կողմերէն կ'անցնէր՝ անոր դիմեցին և ներկայացուցին այս կնճռոտ հարցը, լուծելու համար։ Ալի երկար բարակ մտածելէ ետքը կերպ մը գտաւ կտակարարին փափաքին համաձայն բաժնելու այս 17 ուղտը, առանց մնայորդի։ Գտանել թէ ի՛նչպէս բաժնեց։

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Շաբաթաթերթ Առեւտրի մէջ Նոր Տարիի առաջին թիւին սկսեալ չատ հետաքրքրական պատմութիւն մը հրատարակուելու սկսած է։ Այս պատմութեան անունն է «Ոսկեգետի Թագաւորը»։ Եթէ ձեր ծնողքները չաբաթաթերթ Առեւտրի բաժանորդ չեն, խնդրեցէք որ ըլլան, և դուք կարող ըլլաք այդ գեղեցիկ ու հետաքրքրական պատմութիւնը կարդալ։

Խմբագրութիւնը

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահեկան արծաթ կանխիկ

* Ե. ՊՕԼԻՍ *

Կ. ԵՒ Մ. Յ. ՔԵՇԻՇԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Մահմուտ Փաշա, Բէարճի խան, Նո. 33—34